

# ՀԱՅՐԵՆԸՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՐՎԱՆՉՏՅԱՆԻ ԵՐԿԵՐՈՒՄ <sup>1</sup>

«Հայրենասիրություն մի անկշիռ եկ  
զերնարգո առաքինություն է եկ իսկա-  
կան ըստյաց ընն արմատ»:

Գ. ՍՐՎԱՆՉՏՅԱՆ

Բ.

Տարոնում, որտեղ խմբագրում էր «Արծուիկ Տարոնոյ» կիսամսյա թերթը, Գ. Սրվանձտյանը կատարեց իր մրա զբված ծանր պարտականությունները: Դա Ս. Կարապետի վանքի միաբանությունից մեջ ծագած փոթորիկների շրջանն էր: Մշո ժողովրդին դեպի լուսը առաջնորդելու շրջանը, մի կողմից՝ հետադիմական Մամբրե Զաքարյանականների, մյուս կողմից՝ լուսավորչականների, Որիմյանականների կատարել պայքարի շրջանը:

1860-ական թվականներին Մշո դաշտի հայ ժողովուրդը ծանր հարկերից ու հարձրտահարություններից սույի էր մատնված:

Ազգային ցեղերի հետ միաժամանակ դյուրացու արյունն էին ծծում ամեն կարգի տիրող-դրկողները: Վերջինս միայն մի ելք ուներ՝ թողնել ամեն ինչ և հեռանալ...

Մուշը դաղթում էր:

Հայ մամուլը միայն ողբում էր:

Մշո Ս. Կարապետի վանքում նստած և այդ ժողովրդի շահերի համար իրենց կյանքը դրած Որիմյանն ու Սրվանձտյանը կատարել պայքար էին մղում տեղական անկարօրգանների դեմ, որոնք անտարբեր դիտողի դերում էին միայն: Հայրենասիրելու երկվորյակը տառապանքի մեջ էր: Երկուսն էլ մեռնակ էին: Սակայն նրանց լավ էր ճանաչում ժողովուրդը: Ուստի նրանք ոչ մի առիթ բաց չէին թողնում ժողովրդի մեջ քա-

րողելու այն մտքը, թե չկա ավելի մեծ թշվառություն, քան հայրենի երկիրը թողնելը և կամավոր աքսորի մատնվելը:

Մուշը տաղնայ էր ապրում:

Գաղթականները ծածկել էին ճանապարհները: Տեր ու տիրական չկար: Իրավադուրի գործիչները նրան ոչ մի կերպ օգտակար լինել չէին կարող: Մնում էր դեմել Ազգային Վարչությանն ու Բարձրագույն Դրանը: Եվ ահա, 1863 թ. վերջին Գ. Սրվանձտյանը Կ. Պոլսումն էր «Ազգրս առ Ազգային Վարչության» աղերսագիրը ձեռքին: Ամբողջովին սերտ և զգացմունք դարձած Սրվանձտյանը դրում էր.

«Տարոնեն նոր կու դամ, վկա այն ամեն թշվառությանց և աղետից» դոր կը կրեն դավառայինը... եկած եմ մեր աշխարհներու մշտաց և ցախոց թարման կամ դուժկան. միշտեր, որոց տեսակները բյուրավոր են և որոց զոհ եղողները հազարավոր: Տարոնի ծոցեն միայն այս ժամանակ 600-են ավելի տուներ դաղթեցան անիրավաց ձեռքեն, անխիղճներու երեսեն, անկարողության և անտերության համար... Տարոն իր զավակներով հիվանդ և հոգեվարք է, այս ցավալից լուրը հառաջուց բերով ձեզ ողբասաց «Արծուիկն» յուր: Ուրտի բոխիկ և դարձանիչ հասուցեք իրեն: Այլա թե ոչ որի՞ն երեսփոխան պլտի անխանկիթ, որի՞ն վարիչ, որի՞ն տնօ-

<sup>1</sup> Սկիզբը տես «Ելմիածին», փետրվար-մարտ, 1944.

րեն: Հայաստանի անբնակ հողերուն, ամա-  
յի տեղերուն»<sup>1</sup>:

Այնուհետև խոսքն ուղղելով դավառա-  
կան ցեղերին, գրում էր, թե նրանք այն-  
պիսի խեղդատակներ են, որ ոչ միայն տե-  
ղական ղեկավարներից, այլև նույնիսկ Ազ-  
գային վարչութիւնից էլ պիտի խլեն բո-  
լոր իրավունքները: Սահմանադրութիւնը,  
գրում էր նա, այդ անխիղճների համար  
սչնչութիւն է և քանի կան նրանք, չի  
վերծաղբւելու օրենքը գլուղական վարչե-  
րում: Այդ պատճառով Սրբանձոյանը պա-  
հանջում էր՝ «...Սահմանադրութիւն հետ  
մարդ և մարդու հետ արտոնութիւն տալ,  
պատրաստել, հանել ի դավառներ, մարդ,  
որ երթա դմարդ մարդոց ճանկեն ազատե,  
մարդ՝ որ երթա մարդկութիւն իրավունքը  
և սահմանադրութիւն սկզբունքը նորոգ  
հաստատե»<sup>2</sup>:

Շարունակելով բողոքը, նա ավելաց-  
նում է.

«Պարտ մանրախույզ խնդիրներու ժա-  
մանակը չէ հիմա, անդին ահադին աշ-  
խարհներ ձեռքե կերթան. ձեր օրով  
կերթան...»

«...Ո՛հ, թերևս այնպես չեն ըմբռներ  
ձեր մտքերը հայաստանցիոց վշտաց  
պատկերը, թերևս չեն զգար այնպես,  
ինչպես անոնք, որ անձամբ հաղորդ և  
ակնաստես են եղիր այն աղետներուն,  
որոնցմե մեկն ալ ահա ես եմ ...»

«...Մուշր մշավ, Տարոնը տարան. ա-  
նոր բնակիչները հետոհետե փախան,  
շատերն անթոթութենէ մեռան... վերջին  
գութաբերին կսպասեք, որ դա և գութ-  
եւ, թե ահա Տարոնս տունը ամբողջ  
փլավ, և յուր որդիք տակը մնալով  
ողջ ողջ մտան դերեղմանը...»<sup>3</sup>:

Ժողովրդի շահերովն ու խոհերովն սպ-  
րող Սրբանձոյանը այս բողոքների համար  
ենթարկվեց էլ ավելի անտանելի հալա-  
ժանքների: Ուստի թողած Ս. Կարապետի  
վանքի իր պաշտոնները նա առժամանակ  
նահանջ կատարեց: Եվ ինչպես որ վիճակ-  
ված էր նրան, այցելեց դաղթող Ժողովրդ-

դին. հորդորեց նրան վայրերում մնալ և  
հողից չտոկվել: Տեսածն ու լսածը նա գրի  
կը հառաչես սրտիդ խորերին.  
«Ո՛ւր է քո սեղան, մշեցի հայ, ինչո՞ւ  
խնձույք չես կազմեր: Աբարածները  
բոլոր կը ցնծան հուսով նոր տարին  
չնորհալորելով. քայց դու կհառաչես,  
կը հառաչես սրտիդ խորերին. —

...Լաց և արտասուք փոխանակ եր-  
գոց և զվարճութիւնաց կը մատուցանե  
մշեցի հայն նոր տարիուն տոնին, հոն  
մանկամարդ մայր մը յուր մեկ դավա-  
կին նայելով կը հեծեծե, հոս այբին իր  
որբը գրկած միասին կողբան ու կմը-  
կտան. այնտեղ նոր հարսը մեկ ձեռքը  
իր կուրծքին վրա, մյուսը աչերուն  
վրա դրած միայնակ նստեր ցուրտ և  
դատարկ տան անկյունը կը դողդողա  
և իր փեսայի պանդխտութիւնը կհիշե  
յու կողբա: «... Իր խրճիթը ծածկող  
դերաններն ալ տոկոս դրկած են, իր  
գամակին ժառանգութիւն ի՞նչ պիտի  
թող տա, պարտք, աշխատութիւն,  
բա՛նտ, տուղանք, արտասուք մինչև  
մահվան օրը, քրտինք հեղեղիլ թես և  
անոր մեկ կաթիլն անդամ իրեն բաժի-  
նը չէ: Թե՛՛՛՛ ոսկորները փշրելու չափ,  
ստրկութիւն քան զդերութիւն քեշ վի-  
ճակ»<sup>4</sup>:

Այս տխուր տողերը, որ Գ. Սրբանձո-  
յանի Մշո դաշտի մի ընդարձակ նկա-  
րադրութիւն հատվածներն են, իր ժամա-  
նակին մեծ աղմուկ հանեցին: Ոչ միայն  
դավառական հայ և թուրք օրգանները,  
այլև Օսմանյան պետութիւնն էլ զգաց  
կործանարար քաղաքականութիւնը, որի  
հետևանքով հայ դուռաշին դարձավ բնա-  
վեր: Բայց և այս բանի հետևանքով էլ  
Գ. Սրբանձոյանը անմիջեց դադարնի հսկո-  
ղութիւն տակ հինց Պոլսի կողմից: Սակայն  
Սրբանձոյանը տոկուն կամքի շնորհիվ հու-  
սախաբութիւն չսպրեց: Ընդհակառակը,  
բոլոր ժամանակ նա յուրայիններին հորդո-  
րում էր դործել, իսկ ներկան երջանակացնե-  
լու համար պահանջում էր լավ ուսումնա-

1 Ժամանակ հանդես, 1864, № 27, էջ 8.  
2 Ժամանակ հանդես, 1864, № 27, էջ 8.  
3 նույնս

1 Ա. Պիպեճյան, «Ճաշուկ հայ մատենագրու-  
թիւն» 1979:

սիրել մեր ժողովրդի պատմական անցյալը, հետեւել առողջ արագիցիցիաներին, կյանքը դարձնել հայրենիքի համար:

Նա հայոց պատմութեանը լավ ուսած լինելով տեղապրական նկարագրութեաններն ու հայրենի առասպելները ընթերցողին ներկայացնելիս հաճախ վկայակոչում էր մեր պատմիչներին: Ապա նոր սերնդին հայրենասիրական ուղով դաստիարակելու նպատակով ամեն առիթ օգտադործում էր ոգեշնչելու հայրենիքի սիրտ դադարեցրել:

«Գրոց-Բրոց»-ում նկարագրելով հայրենի երկրի սուրբ հողը, սր զուրուրանքով գրկել են քաջ նախնիները մարտիները, ծաղիկներում պահել է մեր անցած ու դնացած շին ու ավերակները, որի վրա մինչ այսօր էլ կանդուռ են մեր վկայարաններն ու կոթողները, Սրվանձախանը բացակամչում է. «Ա՛հ, որչափ անմահ և պանծալի Նիշատակներ դեռ կենդանի ունի մեր հայրենիքը»:

Սրվանձախան իրեն հատուկ յուժորով ծաղրեց օտարամտը՝ և մայրենի բարբառը չսիրող այն ազգայիններին, որոնք կրթութուն ստանալով Եվրոպայում, զսիրեցին դայն, հարմարեցան անոնց, և հետո թողին իրենց բնիկն, հայրենին, ազգայինն ու ընտանին»:

Ընթերցողին զուշացնելու նպատակով նա գրում է, թե ինքը ընտով նախապաշարված կամ իրենն ուրիշներից թանկ դնահատողներից չէ, ավելին, ինքը շատ բարձր է դնահատում եվրոպական մշակույթը, սակայն երբեք տեղի էի տա մոտանալու սեփականը՝ ազգայինը:

Ժամանակի հայ ուղին և հայոց լեզուն վատ ուսած պոյարնակ ազգայիններին մտրակում էր Սրվանձախանը:

«...Կը վտտին այդ պարոններն ու օրիորդները քաջ քաջ եվրոպական լեզու մը, իսկ հայերենն իրօսած ժամանակը կը հանգուին ու կը կանգուին, օժանդակ կը խնդրեն... միևնուրն յոտգին մեղադրական մ'ալ՝ ձգելով հայկականին»:

վրա, թե—է՛, սա մեր հայերեն լեզուն որքան պակաս և կրճատ է»:

Գ. Սրվանձախանը լեզուն համարում է այն նախապայմանը, որի վրա պետք է հենվի յուրաքանչյուր ազգ ու ժողովուրդ, ուստի նա պահանջում է լեզվի ճշգրտ ու սուցումը դարբոցում, սկսած հենց առաջին դասարանից:

Այդ նպատակով նա 1866-ին կազմեց ստորին դասարանները համար աշխարհարար լեզվով շարադրված մի դասագիրք, որը երկար ժամանակ գործածվում էր Տաճկահայաստանի դպրոցներում:

Լինելով ժամանակի հմուտ մանկավարժներից մեկը, Գարեգին Սրվանձախանը երկար ժամանակ վարեց ուսուցչի և տեսչի պաշտոններ վարագում, Մուշի Ս. Կարապետի վանքում, Կարինում և Պոլսում: Նա պահանջում էր, որպեսզի մեր դասագրքերը կազմվեն ընտանեկան սովորութեանների բազայի վրա, աշխարհաբար, հստակ լեզվով: Որպեսզի մանկան մեջ անդառնալիորեն մշակվին մայրենի լեզվի տարբերը, նա խնդիր էր հարուցում:

«Բուն աղ սրահեն, բուն աչքեն սկսելու է արդեն ուղղութեանը, որուն մեր ազգը կարեւորութուն չտար և չտալով ալ կարող չլինեիր զինքն ուղղել, չուղղելով կարող չլինեիր հառաջ ընթանալ: Այո՛, ամեն բանը սկզբեն, աչքեն, մանուկեն, առաջին սրահեն ուղղելու ենք: Դասագրքեր պետք են մանուկներուն պատշաճ, հասկանալի և սիրելի բառերով և առարկաներով...»:

Նա մանկավարժներից պահանջում էր նաև, որ նրանք աշխարհագրական գիտելիքների ուսուցումն սկսեն տվյալ վայրից՝ անից ու փողոցից, մինչև հայրենի հեռավոր բերդերն ու ավերակները, որոնք «ոչ միայն գլխարկով և պիտանի կլինեն ուսանողին, այլ, և նոր ու մեծ յույս կուտան մեր հայկական լեզվին, մեր ազգային հրնազիտութեան ու պատմութեան, որք լի են թյուր հասկացողութեամբ»:

Սրվանձախանի մանկավարժական դադափարները ժամանակին ըմբռնեց և կյանք

1 «Գրոց-Բրոց», էջ 10.

1 Նույն, էջ 17—18.  
2 «Գրոց-Բրոց», էջ 20—21.  
3 Նույն, էջ 22—23.

քում իրագործելի դարձրեց մանկավարժ Սեդրակ Մանդինյանը: Նա պարզապես «Գրոց—Բրոց» դարձրեց դպրոցի առաջին աստիճանի դասադիրքը, կրճատելով այն ու արեկվեաճայ դրական լեզվի վերածելով: Այդ դասադիրքով սերունդներ դաստիարակվեցին: Այս դասադիրքի առաջին և կարեւոր մասը, «Մասունցի Դավիթ կամ Մհերի դառ»-ն է կազմում: Սրա փորձով մեր էպոսը արագ մասսայականացավ:

Գիտակցված հայրենասիրությունն էր պատճառը, որ Սրվանձաթյանին մղում էր դեպի ազգազրուժյունն ու ժողովրդական բանահյուսությունը: «Մասունցի Դավիթը» առաջին անգամ նա գրի առավ ոչ պատահականորեն, այլ խորապես գրաւով նրա նշանակությունը:

«Այս գործիս («Մասունցի Դավիթի» վ. Բ.) հրատարակությունը հասկացողին համար արժեք կունենա, բայց կարծեմ արհամարողներ ավելի պիտի լինեն և այսպնոդներ, ոչ միայն այս գրվածքին կոտորը, այլ ամբողջ սույն գրքույկը, ընդ որ և իմ անձը: Ասոնք չհասկացողներն են: Բայց մեր փուլեր չէ: Քաջալերված կը համարիմ դեռ եթե համբուսեցով քան հոգի և եթ լինեն հավանող այս գործույն, և կը շարունակեմ, խրախույս տալով այլոց, որ հետևին, աշխատասիրեմ ձեռք բերել, ի լույս ածել այսպիսի գրվածքները»:

Բայց ինչպես ահաղեմ: Մ. Աբեղյանն է նկատում, Սրվանձաթյանը սխալվում էր: Նրան փրախուսեցին բոլորը: «Մասունցի Դավիթը» հանդիսացավ հայ հերոսական բանաստեղծության հիմնական ակունքներից մեկը: Հայկական էպոսը նրա գրի առնելուց հետո միայն դարձավ հայ դիտական մտքի գրադաման առարկա:

Պատմականի և առասպելականի դերը լիովին հասկանալով էր, որ Սրվանձաթյանը ոչ միայն «փորփորում», այլև առաջարկում էր ամենքին «հողերու իսպերը, ջրերու խորերը, շինից իրատակներն ու ավերակները փորփորել և խառնել բրբռով ու գրչով, և

ազդ յուրաքանչյուր յուր նախնայց անձանց և արարոց ծանոթ առնել»<sup>1</sup>: «Այո, հարկ է, որ մենք զմեզ քաջ ճանաչենք, մեր հայրերը ճանաչենք, մեր հայրենիքը ճանաչենք»<sup>2</sup>:

Այս անսանկունից ելնելով նա գրի էր առնում մեր հարուստ Փոլկոթի ընտիր նըմունքերը, նկարագրում ազգային սովորությունները, քրքրում էին ձեռագրերը, լույս էր ընծայում պատմական արժեքավոր հիշատակարանները, հրատարակում ձեռագրերի մեջ դարերով պահված և մեր բանասիրությանն ու ժողովրդին անհայտ հայ միջնադարյան տաղերգուների գործերը և այլն: Այս բոլորի ուսումնասիրությունը նա անհրաժեշտ էր համարում որպես զգալափարները բեղմնավորելու՝ ճշմարիտ միջոց:

«Կը զարհուրիմ ասել», գրում էր նա, «զրոգ և ընթերցողներ ունինք բավականին շատ, ոսկիայն անոնցմե շատերն անդեռ են ազգային հին պատմության և ներկա կենցաղավարության. ներքի ինձ ասել, թե անդեռ են նաև անոնցմե շատերն, որ այսօր ազգային օրենսդրի կամ կառավարողի պաշտոն ունին»<sup>3</sup>:

1877-78 թ. Թ. ուն-Թուրքական պատերազմը սոսկալի ծանր հետեվանքներ թողեց Թուրքիայի ժողովուրդներին նյութական և խարոյական կյանքի վրա: Հաղթող տերության առջև ծուկի եկած Թուրքիայի դավառներում ծնունդ առան անիշխանական սրամաղբությունները: Երկրի ծայրամասերում միջնադարյան կյանքով աղբող լեռնաբնակ ինքնիշխան ցեղերն ու տոհմերը զինված և զագանացած ավերածություններ էին սփռում երկրում: Պատերազմի հետ կապված դժվարությունները լրացնում էին այն բոլոր տառապանքները, որ կրում էին մասնավորապես քրիստոնյա ժողովուրդները Թուրքիայում:

Նույն այդ վիճակում էր և հայ ժողովուրդը, որը գուրկ էր կյանքի ու գույքի ապահովությունից: Դրա հետևանքով հայ ժողովուրդը շատ տեղերում բռնել էր արդեն գաղթի ճանապարհը: Դա կատարվում

1 Գրոց ու Բրոց, էջ 131:

1 Արվանձախան, «Մանանյա» 1876, էջ 35:

2 Նույն, էջ 33:

3 Նույն, էջ 38:

էր հայ մտաւորականութեան քաղաքական ակնկալութիւններէի աքն շրջանում, երբ մեծ հուշով սպասվում էր ազգային ինքնավարութեան հաստատումը Բեռլինի վեհաժողովում: «Այն օրերը հայկական խնդիրն թե առած սախաններ և հասեր էր Եվրոպիո մեծ տերութեանց դաշինքները և քաղցր հուշեր կանխեր սիւտեր էր Հայաստանի սփերականերուն և հայոց ավեր սրտերուն: Հայրենի հողն ու հողուն հալասարած հայն կենաց նոր շարժում մը կտանայր», գրում էր Սրվանձտյանը «Թորոս Աղբար»-ում»<sup>1</sup>:

Տեսնասական-բարոյական ու քաղաքական տառապանքներէի և մեծ հուշերէի աչդ օրերին Կ. Պոլսի աքն ժամանակիս պատրիարք Ներսես Վարժապետյանը համաձայնութիւն առնելով բարձրագուն Դոնից երեք վարդապետ գործողեց հայկական դաւաններն ուսումնասիրելու, ժողովրդի նիստն ու կացը նկարագրելու, դժգոհութիւններէի պատճառներն խմանալու, դրպրոցներն ու եկեղեցիները հաճախելու, նրանց իրճակագրական տվյալները վերցնելու և, որ ամենից կարեւորն է, հայ գաղութներին իրենց մտադրութիւնից ետ կանդնեցնելու նպատակով:

Այդ երեք վարդապետներէից մեկը Գ. Սրվանձտյանն էր, որ պիտի անցներ մոտ երկու տասնյակ գավառներ:

Ստանձելով այս պարտականութիւնը Գ. Սրվանձտյանը 1878 թ. ապրիլին մեկնում է գավառները:

«Կերթայինք մենք ողջունասար և մխիթար՝ հուսարեկ հայոց»<sup>2</sup>, գրում էր նա իր այս տառջին ուղեվորութեան օրերին: Նա թողնում էր պճնադարձ Բյուզանդիոնն ու Վտախորի սքանչելի տիկերը, որոնք, սակայն, ոչ մի բանով հարազատ չէին ասական սիրտն իր կրճքում կրող Սրվանձտյանին: «Օտար էին անոնք, ես կերթայի հայրենյաց արևն ու դարունը ողջունել»<sup>3</sup>, գրում էր Սրվանձտյանը:

Իր այս նոր պարտականութեան մեջ Սրվանձտյանը ցուցարեքեց իրեն հատուկ

նվիրվածութիւն, որ բխում էր նրա խառնվածքից և պարտաճանաչութեան բարձր գիտակցութիւնից:

«Հոժարութեամբ զնացի, հոժարութեամբ շրջեցա, հոժարութեամբ դարձեցի... հազարախոր մխիթարութեանց կը հանդիպեք մեր հայրենական ջրերուն, հովերուն, մարգերուն, դրախտներուն, բերքերուն և պտուղներուն...»<sup>4</sup>:

Նույնպիսի եռանդով Սրվանձտյանը ձեռնարկեց երկրորդ ուղեվորութիւնը, որ տեղի ունեցավ հաջորդ 1879 թ. գարնանը: Այս ուղեվորութիւնը տեւեց մի քանի ամիս անընդհատ: Նա կրեց տեսակ տեսակ տառապանքներ, անցավ վտանգավոր ճանապարհներ, հաղթահարեց ամեն տեսակ խոչընդոտ, մուտք գործեց հայկական և թուրքական դուռերը, տեսավ, նկարագրեց ու ուղբաց հայրենի ժողովրդի ծանր վիճակը:

Նա այս երկու ուղեվորութեամբ ոտքով գծեց Հայաստանի քարտեզը: Եղավ աքնտեղ, ուր ոչ ոք սիրտ չէր անում լինել, մտալ այնտեղ, ուր մահ ու սարսուռ էր սիրում: Շատերի նման նա էլ աչդ ուղեվորութիւններէի ընթացքում կաղնեց հանձնարարված վիճակագրութիւնները, բայց շատերից տարբերվեց նրանով, որ իր պարտականութիւնը չսահմանափակեց սոսկ վիճակագրութեամբ:

Մանելով հուսարեկ, հայրենի օջախից խրոնած ժողովրդի մեջ, Սրվանձտյանը յուրահատուկ համոզիչ լեզվով կարողանում էր ողեվորել և հուսադրել նրան: Գտնում էր, որ որքան էլ տապալիք որևէ ժողովուրդ, այնուամենայնիվ նրա համար սղատութիւնն օտարներէի մոտ չէ: Ազատութիւնն ու երջանկութիւնը, լնչպես ճիշտ դատում է Սրվանձտյանը, մայրենի հողն է, քրտնաջան աշխատանքը և նրա համար համառ պայքարը նվաճողներէի դեմ: Այս բանում Սրվանձտյանը շատ է հիշեցնում «Երկրագործութեան» հեղինակին:

«Պաղոզը իր բուսած հողին վրա կը հասունանա, մանուկն իր մորը ջերմիկ

<sup>1</sup> Սրվանձտ. — «Թորոս Աղբար», 1. էջ Ը — Թ:

<sup>2</sup> Նույն 1, էջ Ը:

<sup>3</sup> Նույն, էջ Թ:

<sup>4</sup> Թորոս-Աղբար 1, էջ ԺԳ:

ծոցը կը դարգանա: Եվ պտուղը հասուննալու, հունձը հնձնու եղանակն ամառն է՝:

Սրվանձոյանը լախտես հեղինակներէց էր: Նա սպասում էր հայ ժողովրդի ազատագրութեանը, նրա «ամբանը»: Իր լախտեսութեանը սերմանում էր Հայաստանով մեկ:

«Կը Զանայի համոզել զիրենք (հայերին: Վ. Բ.) թե ամեն երկիր զիչեր կլինի, խափար կունենա, բայց չէ՛ որ Աստված ամեն օր առաջու կը բանա, լույս կուտա մեզ, ձմեռվանն հետո կուզար դարուն. ամեն աշնան չորացած, քաշված, տրորված ու դուսացած հողը Աստված կրկին կը կանանչացնե, դարնան արեւիով կը հալին ձյունները, կը տաքանան օրերը, կը ծաղկին դաշտն ու ծառերը, ալպակն և մեր վիճակը կնորոգվի»:

Սրվանձոյանը մերժում էր եվրոպական օրինաւորայի սնանկ դաղափարը: Նրա համար ազատութեանը դալու էր իր իսկ ժողովրդէց, ներսից, տիրոջներէ զեմ երեսու ռ ճանապարհով, որը սակայն, բացարձակ ձեով ասել չէր կարող:

Երբ Հայաստանի իշխան պատվիրակութեանը Մկրտիչ Խրիմյանի դիտարկութեամբ շրջում էր Եվրոպայում և կամացուկ թիկացնում Բեռլինի ամօթաբեր վեհաժողովի դռները, Հայաստանի շատ քաղաքական դործիչներ հայկական հարցը լուծված համարելով հրճվանքի օրեր էին ապրում: Բայց այդ հույսերը չարդարացան: Խրիմյանի թղթե դղալը մնացել էր բերթող հարիսայի կճուճի մեջ...:

Այդ Ժամանակ Հայաստանին՝ նրա կեղծ բարեարեւելիքն քաջածանոթ Սրվանձոյանը հույսի ոչ մի նշույլ չէր տեսնում եվրոպական օրինատների ճառերի մեջ: Նա անձամբ շրջելով ինքն իր ճանաչողութեանը կորցրած ժողովրդի մեջ, արցունքն աչքերին, այդ ժողովրդին կոչ էր անում «Գորուստը կորսված տեղը՝ որոնել, այսինքն քաղաքական հարցերը հենց տեղում որոշել»:

Հայաստանի մեջն է բուն ՀԱՅԿԱԿԱՆ խնդիրն, իսկ մենք Պերլինի մեջ կորոնենք դայն»<sup>1</sup>, զբռն էր Սրվանձոյանը:

Իսկ մեկ այլ առիթով նա Բեռլինի կոնգրեսի հասցեին ահա թե ինչպիսի ծաղր է շարտում.

«—Թեպետ գետալը դեղ մը կար, բայց կարի հոչակալ էր անոր մոծակաց և լվոց բարձութեանն ու բարբարոսութեանը, ուստի և այս իրավամբ Պերլինի Բեռլինի ինֆեւալարութեան և տնկախարքուն տված էր անոնց իրենց որոշյալ տեղը»<sup>2</sup> (Բնդ. իմն է Վ. Բ.):

Դրացի ժողովուրդների միջև աղբային կոխներ սերմանող օտարազգիների նկատմամբ Սրվանձոյանն ուներ որոշակի բացասական կարծիք և յուրայիններին զուշացնելու համար (որոնք տառապում էին եվրոպական օրինաւորայի հիմնադրութեամբ), դրում էր, թե նրանք կոխներ սերմանուց հետո «խնդացին, ու ծախ դարկին խաղացին», ուստի անկարող է հավատ ընծայել: «Ոչ եղբարք,—չարունակում է գրել նա,—այս չէր մեր ընկիւղը... Այդ կեղծ բարբարոսները ոչ հայուն հորեղբայրն էին և ոչ՝ հայուն քեռին, այլ ավելի ճարպիկ որսորդներ ու մսազործներ, որ զմեզ երեւալքի, պատրաստ ոչխարներու և պարբակ կոտորուն տեղ զներով մեր փարախեն կոտորին խրտնեցնել, հեռացնել և իրենց ձեռքը ձգելով ի սպանող մատուցանել»<sup>3</sup>:

Հավերժ. կրնա Սրվանձոյանի մեջ այն բարձր մեծահոգութեանը, որ պայծառ էր Հայաստանի արևի պես, վճիտ ու խորունկ էր հայրենի լճերի պես: Դա նրա զեպի բրտաթոր աշխատավորներն ունեցած բարյացկամ վերաբերմունքն էր և՛ հայի և թուրքի, և՛ քրդի, և՛ չերքեզի նկատմամբ առանց խորութեան: Այստեղ,—մարդ հակացողութեան այս իսկական այխարհում,— Սրվանձոյանն անդնահատելի մեծութուն էր, որի անձնավորութեանը հարող մասսաները նրա անունը լսելիս, Երբ

1 Թորոս Աղբար, № 2, էջ ԺԷ,  
2 » » № 3, էջ ԴԻ,  
3 » » № 1, 2.

1 Թորոս Աղբար, 1, էջ 270.  
2 » » 1, էջ 334.  
3 » » 2, էջ ԺԷ-ԺԸ.

ա այցելում էր դավաճները, որ ստաջ, խափորով դիմավորելու էին նրան :

Նա որքես Հայաստանի ճամբորդը «Հաճախ էր օրերն անց էր կացնում քրդական» լրաններում և թուրքերի տներում : Նրան արդանքով էին վերաբերվում թե քրդերը, թե թուրքերը : Հաճախ նրան շրջապատելով խորք աշխատավորները հարցնում էին աշարհի խաղաղության, կյանքի լավացման ասին : Ժողովուրդների այս անկեղծ բարեամիտ պատկասում էին մինչև խզ իր թըշամինները :

Սրվանձառյանն իր ուղեվորության ընթացքում նման էր կախարհ դրամավարի, որ մադամանորեն ցանկալի խաղաղություն էր տեղծում այն վայրում, որտեղ սուք էր նում վնջը :

Աշխատանքի բնույթի և նվերվածուէյան տեսակետից Գ. Սրվանձառյանն իր էությունի տեհնանշանավոր դարձիւն է : Մի անգամանք, որ մեր պատմադրության ողմից խիստ ուշադրով է և ուսումնասիրության կարուս :

ԹԱ) Սրվանձառյանը իրաք ինչ նշանով արեկամ է ուրիշ ժողովուրդներին, այդ բովում է մի հանգամանքից : Դա քրդերի յանքը ուսումնասիրելու կնդիրն է :

Դեպի այդ ժողովուրդն ունեցած հարանքի արդասիք սեռք է համարել նրա՝ որական հայանի ամանդություններից մեի՝ «Սարէ Սիխանէ»-ի թարգմանությունը այերեն :

Գ.

«Հայր հայուն ծանոթացնել, հայր հաուն սիրել աա է բարբոսին իմ դախաքս ջանքս», գրում էր Սրվանձառյանն իր աալին ուղեվորության ժամանակ : Այս անգամանքը շատ բարերար ազդեցություն թողել նրա զեղարվեստական ճաշակիտա : Գուցէ ամենից շատ այս հանգամանքներ պատճառը, որ Սրվանձառյանն իր ուեվորություններին կամ հենց որեէ ստեղադործական ու հավաքական աշխատանքի

ընթացքում կատարում էր լիբիկական գեղումներ :

Ինչպես Ներսես վարժապետյանի կոնգակից, նույնպես և Բարձր Դրան հրամանագրից երևում է, որ Սրվանձառյանը գալտաններն է մեկնում սմատեսական և վիճակագրական տվյալներ հավաքելու նպատակով : Բայց «Հայր հայուն» ծանոթացնել ցանկացող ուղեվորն իր սահմաններից դուրս գալով աշխարհագրական չոր ու ցամաք նկարագրություններին և վիճակագրական թվերին աայիս է այնպիսի բովանդակություն, որ ընթերցողը մի պահ ժոռանալով իր վիճակը, բռնում է հեղինակի փեշերից և ինքնամոռացման մեջ ընթանում է նրա հետ այն վայրերը, ուր մի ժամանակ զեղզեղել է իր անկրնկիլի աղթքները Գ, Նարեկացին, ուր սուրել և ստեղծագործել է Ծնորհալին, ուր անդ ու անդաստան շին է դարձել ժիր հայ մշակիլ ձևքով :

Ահա նա շտապում է հասնել հոչակավոր Մոլքը : Կարոտած ճամբորդը դրկում է նրա հոդն ու քարերը :

«Կը փարիմ, կը դրկեմ, կը պագնեմ, կը սթափիմ, և այլ աչերս չիբեցուցի երկինք : Երկինքն բարձր փառք մը դասած էի : Աչքս ի ծովն, միշտ ի ծովն շեշտ ի ծովն» : Բայց ախուր է ծովը : Որբացնում է Ծնորհալու հայերենիքը : «Մո՛վ, դու է՞ր չես ծիծաղեք» :

«Բաներ կորոնեմ յուր մեջ, չցուցներ, հարցումներ կընեմ իրեն, չպատասխանեք», որովհետև նա կորցրել է իր «երբմեի դավկըները» : Հայրենի հին հիշատակներին լուռ ու տխուր հայեցիվածքը Սրվանձառյանի աշքերից դառն արցունքներ են քամել : Իր մեջ արթնացած ազգային զգացմունքները նա դրի էր սունում թախած արցունքներով : Համբույր սալով քարերուն, հողերուն, փլատակաց փրա բունած խոտերուն», նա դիմում է լեռներին ու ծովակին, որ արձագանք են սվել «երկնային աշուղ» Ներսես Ծնորհալուն, ջրերին ու թռչուններին, որոնք շարժել են բանաստեղծի մտքի քնարը, աստղերին ու արեգակին, որ

Թորոս Աղբար, էջ ԺԱ

1 Նույն, 1, Գ.  
2 Նույն, 1, Ե.

«սպաճառ և շքեղ ճառագայթներով ոչև-  
վորած են «Առաջիտ լուս», արեգակն ար-  
դար, առ իս լույս ծագյա՞ ղեղդեղողին»<sup>1</sup>:

Դեռ ցամաքը չէլած, հալք մը կը տես-  
նեմ, սեփորակ փետուրներով, բարակ  
վզիկով, դրբակ գլխով, որ ծածած էր  
մեկ քով, թխորակ աչքերով, սպիտակ  
լանջով, ծնկները ծալած ջրույն այրաց  
վրա կերերա, սպալորի մը կամ անդին  
կորուստ ունեցողէ մը կը նմանի, բը-  
նուիթյան և առաջիտյան բոլոր դեպեց-  
կութեանն ու գլարթութեանը իրեն  
վրա չարդեք, անսուրբ հյացք մը կը  
ձգէ աչքէ ծայրով դեպի ի մեկ երբե-  
մըն: Մինակ է ինքն բոլորովին: Հան-  
կարծ ծոփույն հատակը կիջնե, կանճե-  
տանա, խորերը կը հուզե, և ահա ջը-  
րույն երեսը կենն արարաց և ունայն,  
միևնույնը սխուր սխուր ու կիր-  
քով<sup>2</sup>: Ի՞նչ կորոնես, ին՛դ՞ հա-  
վուզ<sup>3</sup>:

Տեղացիներէից լսում է, որ այդ հավու-  
կի անունը Թորոս Աղբար է: Դառնալով  
նրան, ասում է.

«Այ Թորոս Աղբար, որ կհուզես ծա-  
վուս խորերը, կհուզես անդունդնե-  
րը... ո՞ր մեկ կորուստներդ կը խրճը-  
րես... Լեփոնյա՞նց, Եթե Երեսխոյանց,  
Հեթումյա՞նց, Եթե Դրեկորիսյանց,  
խո՛ւյն, Եթե սաղտարան... գրո՞ւ  
մըն, Եթե դրոշակն... վկայասիրին  
բուրվառն ու ագոթամատու՞ւյն, Եթե  
Թորոսի օտըն սրի՞ծուց:

Է՛յ, Թորոս Աղբար, թախ՛ը ինձ հետ,  
թախ՛ը գեկդ տանիմ հայրենիքին հե-  
ռացյալ Հայաց ի տեղ, ի հույզ, ի  
հույս... Բայց դու կը մերժես, չես  
հանդգնիր, և ոչ տեղեկ կը բամկվիս:  
«Այո, դու ուղիղ ես, հուզի՛, խրճը-  
րե՛, օտընե՛, ա՛յդ տեղ, կորուստը՛  
կորսված տեղը»<sup>3</sup>. (ընդգծումն իմն է  
Վ. Բ.):

Սիմենն Երեմյանն այս կտորը համա-  
րում է Արամեմուսյանի հարբենտոիրական

խաչորացույցը, ավելացնելով, թե «ատկե  
կարելի է թափանցել անոր հախտակած  
սպգասեր սրտին մեջ: Սիրա մը սասք ու  
բարբախուն Հայաստանի ավերակներուն:  
ժողովներուն և թուշուններուն համար, և  
ամենն ավելի դաժանակի է այդ սիրո ան-  
կեղծութեանը, որ երբ մը, սրտազրավ երբ  
մը կարժե՛...:

Արամեմուսյանի ուղեգրութեանները,  
ինչպես և մյուս գործերը, շատ բարձր են  
դասհատել Հ. Պարոնյանը, Ա. Արփիա-  
բյանը և Մերենցը: Նրանք Արամեմուսյանի  
մեջ տեսնում են անխարդախ սեր դեպի  
հայրենի երկիրն ու նրա դրամանութեանը:

Դրամանելով «Թորոս Աղբար»-ի երկու  
հատորները Մերենցը գրում է, թե «Հայ-  
րենի երկիրն, նորա ավերակաց, նորա ժո-  
ղովրդաց, նորա սրբազայրից, նորա հիշա-  
տակաց նկարագրաց մեջ հինը նորին հետ  
գլուխ ճիշտ բաղադրել, յուր դրչին ասի  
ամեն նկարագիր կենդանի պատկեր կդա-  
նա»<sup>2</sup>:

Ինչ-ինչ պատճառներով «Թորոս Աղ-  
բար»-ի Բ. հատորը լույս տեսավ հինգ տա-  
րուց հետո, «Համով Հոտով»-ի հետ միա-  
սին: Հինգ տարվա բնթացքում Գ. Արը-  
վանեմուսյանը դրական սրեկ դարձ չէր հրա-  
տարակել: Բայց նրա գործերին ծանոթ մը-  
տախորականները իրավացի էին, երբ գրում  
էին հեղինակին, «Լեղևուպե օրացույցի մեջ  
դու շակված ու դրված չկա Ձեր մեանելու  
օրը»:

Այս պատճառով հեղինակը պատրաս-  
տեց և հրատարակեց այն ժողովածուն, որ  
հետագայում դրական-բանահյուսական գո-  
հարներէից մեկը հանդիսացաւ: Դա «Հա-  
մով-Հոտով»-ն էր, որ դժբախտաբար, նրա  
վերջին գործը եղավ:

Մեզո՞ւ կը գազարել Արամեմուսյանի գը-  
րիչը: Արամեմուսի սրբիս քանի սպիտակ ասն  
տղան և մշակը, ինչպես, գրում էր նա,  
«այսի իտրելու, քաղհանք բնելու, սրտ  
ջրելու, վրած պատերը շարելու, խառնակ  
ճամբայները հարթելու, անպեռ բույսեր

<sup>1</sup> Թորոս Աղբար 1, էջ 5:  
<sup>2</sup> Ետին, 1, էջ 6-9:  
<sup>3</sup> Ետին, 1, էջ 9:

<sup>1</sup> Երեմեան, «Գրագետ հայեր» 1, 1913. Վենե-  
տիկ, էջ 221, 222:  
<sup>2</sup> Մեղու Հայաստանի, 1886, № 37:

խտակերու, ցորեն հնձելու, այլուր աղալու ծառայութեանց մեջ զտնօրէցա, և տեղ տեղ ալ դուրսս կոտորեցին, կուրծքս պատուեցին, սիրտս ծակեցին»<sup>1</sup>։ Ոոսքը այն շքրջաններէ մասին է, երբ Սրբանձառայանը Պոլսի պատրիարքարանի հրամանով քննչական պաշտոններով շարունակ դավառներն էր մեկնում կնճուտ հարցերը լուծելու համար։ Եվ արդարեւ, այդ պահի դավառական իրադարձութիւնները այն աստիճան խտանակ բնույթ ունեին, որ ճշմարիտ և ժողովրդական գործիչը պետք է հանդիպեր անասելի դժվարութիւններին։ Նա, այնուամենայնիւ, իր շքապատեան պահին էլ, կարողանում էր ժամանակ դռնել իր սիրած աշխատանքով՝ ժողովրդական բանահյուսութեամբ դրաղիկելու։

Ակնի առաջնորդական պաշտոնը թողնելով Սրբանձառայանը պատրիարքարանի հրամանով 1880-81 թ.թ. Վանի հայանի սովի ժամանակ շտապում էր հասնել իր ծննդավայրը, վտանգին հասնելու և «ճշկույթի մը ուժս չափով» ժողովրդին օգնելու համար։ Նրան օգնութեան էր կանչել իր ուսուցիչն ու ընկերը, Որթման Հայրեկը։ Նրանց ձեռք էին կարկանդակ վանի դավառի հայ, թուրք և այլ սովահար ժողովուրդները։

Այստեղ էլ Սրբանձառայանը լծվում է աշխատանքի և Հայրեկի հետ կարճ ժամանակում կարողանում կորստից փրկել ժողովրդին։ Նրանք ոչ մի խտրութիւն չէին դնում քուրախիներին և այլազգիներին միջև։

Գ. Կալիսկոպոս Սրբանձառայանի քաղաքական հայրենասիրական աշխատանքը վաղուց հայտնի էր Օսմանյան կառավարութեանը։ Ուստի 1880-ական թվականներին վերջերին, Սրբանձառայանը հեռացվեց Տրապիզոնի առաջնորդական պաշտոնից ու հայ ժողովրդից նրան մեկուսացնելու նպատակով տարվեց Պոլիս։ Նա այդ օրվանից ընդմիջտ դրկվեց Հայաստան վերադառնալու իրաւունքից, դառնալով Հայաստանի ամենախճաբատ պանդուխտը... Պոլսի իրեն

համար անհարազատ իրականութեան մեջ, այնտեղ, որտեղ այլևս անկարելի էր հայը հայուն ծանուցանել», որտեղ Հայրին «հայրենայց համն ու հոտը», հողն ու ջուրը։

Սրբանձառայանը զգում էր իր սիրելի ծննդավայրի այրող կարոտը։ Պանդխտութեան մեջ մենութիւնն էր նրա անբաժան ընկերը։ Բայց երկար չտեղեց այդ մենութիւնը։ Մանր ապրումներին և նյութական դրկանքներին մեջ նա հյուսվեց և հիվանդացաւ։

Հայրենիքի այրող կարոտը սրտում, նա վերջին անգամ շնչեց չտրած օդը և հանձնրվեց այն հողին, որից երբեմն շտապում էր հեռանալ՝ մայր երկրի օդը ծծելու և թորոս Այդարին բարեւ ստանելու համար։

1878-ի հունիսին Բերլինի «Վեհաժողովից» հիասթափված Հայաստան վերադարձով հայ պատգամավորութիւնը։

Եվրոպական օրինատացիայի կողմնակից հայ գործիչներէ շտապուտեքը տեսնելով «Վեհաժողովից» ապականութիւնը իրենք ևս հիասթափութիւնն ապրեցին։ Այդ հիասթափութիւնը համատարած բնույթ ստացավ հայ հասարակական մտքի մեջ և որպէս կապար ծանրորեն նստեց նրա ուղեղի վրա։

Ինչպէս տեսանք, Գ. Կալիսկոպ. Սրբանձառայանը առանձին ակնկալութիւն չուներ Եվրոպայից, իսկ հայկական հարցի վերջին ժամից հետո նա հաստատապէս և անվերապահորեն կանգնեց հակադեմոստական պատճոհման վրա։

Բերլինի կոնգրեսը նրա կողմից սուր ծաղրի ենթարկվեց։ Եվ դա պատահական չէր։

Պատմական անյայտն և իր ժամանակի քաղաքական բարդ անց ու դարձին քաջածանոթ լինելով Սրբանձառայանն ուրիշ ճամբա չունեի։

Նրա քաղաքական տեսադաշտում կարծես ուրվագծվում էին դեմոստական վանդալներին այն ոճերները, որոնք աշխարհի ու մարդկութեան միտքը պիտի ցնցելին իր մահից հետո։

<sup>1</sup> Համով—Հոտով. Գ. Պոլիս, 1884, էջ 8,

1914-1918 թվականներին դերմանական խմբերիախտների՝ Ձինդիդխանի այդ անարգ հեանորդների թելադրանքով սուլթանական Տաճկաստանի դաշխճները ավերեցին ու բնաջնջեցին ամբողջ Արևմտահայաստանը:

Հայաստանը վերածվեց Գողգոթայի: Գերմանական վիսնդալիզմին զոհ դնացին հայ ժողովրդի հարյուր հազարավոր լավագույն զավակները:

Հայ ժողովուրդը չի մոռացել այդ Գողգոթան:

Հայ ժողովուրդը չի մոռացել դերմանական բարբարոսների անլուր ոճրադործութունները, որ այսօր շարունակում են հիտլերյան ալազակները: 14 թվականի Արևմտահայաստանի բնաջնջումից մազա-

պուրծ եղած և այժմ Սփյուռքում ապաստան դատած հայ հայրենասերները ամեն կերպ օգնում են մեր պայքարին ընդդեմ ֆաշիստական հորդաների՝ հողմացրիվ անելու ֆաշիզմը և առհավետ ազատագրելու ֆաշիզմի զնդանում անջացող բոլոր ազգերին ու ժողովուրդներին:

Սփյուռքի հայության ջրտնաջան վաստակով կառուցված տանկերի շարասյուններով հայ ժողովրդի կորովի զավակները՝ կարմիր վարդանի ու արին Մուշեղի պանծալի շառավիղները այսօր Սովետական Միության փառապանծ Բանակի շարքերում մարտնչում են հիտլերյան հրոսակների դեմ և անթառամ փառքով պսակում իրենց ի փառս և ի պարծանս Հայ Ժողովրդի և Մայր Հայրենիք Սովետական Հայաստանի:

Վ. ԲԴՈՅԱՆ